ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 4

**«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար գրասենյակային կահույք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.**

ք.Գավառ 18 հոկտեմբերի 2017թ.

Սույն թվականի հոկտեմբերի 18-ին ժամը 15.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար գրասենյակային կահույք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/08» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Սմարթլայն», «ՍԵՆԴԱ» և «ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ-ների կողմից առաջարկվող ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի համապատասխանության գնահատման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հաձնաժողովի բոլոր անդամները՝ հանձնաժողովի նախագահ Ա. Հ. Ապրոյանը, հաձնաժողովի անդամներ՝ Ն. Ա. Կուտուզյանը, Խ. Ժ Սաֆարյանը, Լ. Գ. Սիրունյանը, Ս. Պ. Կարապետյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց ՀՀ ՊԵԿ-ի կողմից հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մասնակիցների ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկատվության և համապատասխան չափաբաժիններով առաջին տեղ գրաված՝ հաղթող մասնակիցների կողմից ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի ներկայացման մասին:

Հանձնաժողովը գնահատեց, որ ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին, կազմվել և ներկայացվել է սահմանված կարգով: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 34-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

**որոշեց՝**

- 1-ին, 3-րդ, 5-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Սմարթլայն» ՍՊԸ-ին:
- 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին:
- 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ-ին:
- Ընտրված մասնակիցներին առաջարկել հաստատել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հետ կնքվող պայմանագրերի նախագծերը և ներկայացնել պայմանագրերի ապահովում:
- Սույն արձանագրությունը և պայմանագրեր կնքելու մասին որոշումը սահմանված կարգով հրապարակել պաշտոնական տեղեկագրում:

- Անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:
- Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել ընտրված մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետներում ներկայացնելուց և անգործության ժամկետի ավարտին օրվան հաջորդող երկրերդ աշխատանքային օրը, ժամը 14.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 5 և դեմ՝ 0:

| | |
|---|---|
| հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Հ. Ապրոյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Ն. Ա. Կուտուզյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Խ. Ժ. Սաֆարյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Լ. Գ. Սիրունյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Ս. Պ. Կարապետյան |
| հանձնաժողովի քարտուղար՝ | Ս. Բ. Ղարաբաղցյան |